



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի 14.07.2017 թ. N 13 նիստում  
Նախագահ Ս. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՅՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱՅՄԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



**I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

**ԽՆԴԻՒ ԸՆԿԱԼՈՒՄԸ**

ԳԿՄԿ-ի ՌԾ-ի «Առաքելություն և նպատակներ» բաժնում առկա էին մի շարք բացթողումներ, որոնք հնարավորություն չէին ընձեռում առավելագույնս ապահովել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանն ուղղված գործողությունները, բացակայում էր ռազմավարական ծրագրի առանձին նպատակների և խնդիրների իրականացման փաստացի առաջընթացի գնահատման առանցքային որակական և քանակական ցուցիչների լրակազմը, շահակիցների ակտիվ մասնակցությունը կենտրոնի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացներին, Կենտրոնի կողմից իրականացվող մասնագիտությունների համար Որակավորումների սեփական շրջանակի մշակվածության բացակայությունը:

**ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ**

Փորձագիտական այցից հետո ուսումնասիրվել և գնահատվել է ԳԿՄԿ-ի ՌԾ-ի առաքելությունն և նպատակները, արձանագրվել, որ Կենտրոնն ունի հստակ ձևակերպված առաքելություն, հաստատության հիմնարար արժեքները, առաջնահերթությունները և գործունեության սկզբունքները պարունակող Ռազմավարական Ծրագիր՝ իրականացման ժամանակացույցով, որոշակի հստակեցված են ներքին և արտաքին շահակիցները, որոնց հետ քննարկվել են ռազմավարական առաջնահերթությունները: Հիմնական գործունեությունը համապատասխանում է առաքելությանը և նպատակներին:

Բացահայտվել է , որ անհրաժեշտ է.

- 1) Մշակել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր,
- 2) Մշակել ռազմավարական ծրագրի առանձին նպատակների և խնդիրների իրականացման փաստացի առաջընթացի գնահատման առանցքային որակական և քանակական ցուցիչների լրակազմ,
- 3) Ակտիվացնել շահակիցների (հատկապես՝ շրջանավարտների որպես շահակիցների կարևոր մաս) մասնակցությունը կենտրոնի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացներին,
- 4) Կենտրոնի կողմից իրականացվող մասնագիտությունների համար մշակել Որակավորումների սեփական շրջանակ:

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
1. Մշակել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր,	1. Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Դեկանատ, ՈԱ բաժին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոններ և ստորաբաժանումներ	Գործող աշխատանքային խումբ	Տնօրեն	09. 2017	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման
	2. Մշակել աշխատանքային խմբի	Պլանավորման	Աշխատանքային խումբ	Խնդիր հստակ գործողություններ	Աշխատանքային խումբի	10-12. 2017	Խմբի գործողությունների

առաջընթացի գնահատման	գործողությունների պլան	փուլում է		և դրանց ժամանակացույցը	ղեկավար		հաստված պլան
<b>առանցքային որակական և քանակական ցուցիչների լրակազմ</b>	3. Իրականացնել նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման բենչմարքինգ՝ ուսումնասիրելու գնահատման առանցքային ցուցիչների առանձնահատկություններն ու էությունը	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Գնահատման առանցքային ցուցիչների՝ որպես նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման գործիքի ընտրության հիմնավորում	Աշխատանքային խմբի ղեկավար	01-03.2018	Բենչմարքինգի հաշվետվություն
	4. Մշակել Ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման ԳԱՑ – երի համակարգը	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	ՌԾ նպատակների և խնդիրների իրականացման ԳԱՑ – երի նախնական ցանկ	Աշխատանքային խմբի ղեկավար	04.2018-09.2018	Աշխատանքային խմբի նիստերի արձանագրություն  Գիտական խորհրդում ԳԱՑ-երի քննարկման արձանագրություն
	5. Կազմակերպել ԳԱՑ-երի քննարկում շահակիցների հետ	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին	Շահակիցների կողմից ընդունելի ԳԱՑ-երի լրակազմ	ՈԱ բաժնի պետ	10-12.2018	Գիտական խորհրդի կողմից հաստատված ԳԱՑ-երի ցանկ
	6. ՌԾ-ի իրականացման ժամանակացույցի փոփոխություն՝ ներառելով նպատակների և խնդիրների իրականացման	Պլանավորման փուլում է	ՌԾ-ի մշակող խումբ Աշխատանքային խումբ	Հստակ սահմանված ցուցիչներ ՌԾ բոլոր նպատակների և խնդիրների համար	ՌԾ-ի մշակող խմբի ղեկավար	01-03.2019	Գիտական խորհրդի կողմից հաստատված ՌԾ-ի իրականացման նոր ժամականացույց

	ցուցիչները						
	7. Մշակել ըստ համապատասխան ԳԱՑ-երի տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման ընթացակարգ	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ըստ ԳԱՑ-երի տեղեկատվության հավաքագրման հստակ աղբյուրներ և ժամանակցույց, վերլուծության և կիրառման պատասխանատուներ և ժամանակցույցեր	Իրավագիտության ամբիոնի վարիչ	04-06.2019	ԳԱՑ-երի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման հաստատված ընթացակարգ
	8. ԳԱՑ-երի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման հաստատված ընթացակարգի կիրարկում	Պլանավորման փուլում է	Տնօրինություն, ՈԱ բաժին Ստորաբաժանումների ղեկավարներ	ԳԱՑ-երի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության վերլուծություն	Փոխտնօրեն	07.2019	ԳԱՑ-երի հրապարակված արդյունքներ  Գիտական խորհրդի արձանագրություն
<b>2.Ակտիվացնել շահակիցների (հատկապես՝ շրջանավարտների որպես շահակիցների կարևոր մաս) մասնակցությունը կենտրոնի</b>	1. Իրականացնել շահակիցների հետ կապերի մեխանիզմների արդյունավետության վերլուծություն	Պլանավորման փուլում է	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին ՈԱ բաժին Ուսանողական խորհուրդ	Շահակիցների հետ կապերի մեխանիզմների արդյունավետության գնահատում	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	09-11.2017	Շահակիցների հետ կապերի մեխանիզմների արդյունավետության վերլուծության հաշվետվություն

<p><b>առաքելության, նպատակների և խնդիրների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացներին</b></p>	<p>2. Կազմակերպել ֆոկուս-խմբային քննարկումներ շահակիցների տարբեր խմբերի հետ</p>	<p>Պլանավորման փուլում է</p>	<p>ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին Ուսանողական խորհուրդ</p>	<p>Շահակիցների մոտեցումները համագործակցության արդյունավետության բարձրացման վերաբերյալ</p>	<p>ՈԱ բաժնի պետ, Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ</p>	<p>12.2017-04.2018</p>	<p>Հանդիպումների մասնակցության թերթիկներ</p> <p>Արձանագրություններ Ֆոկուս-խմբային քննարկումների վերլուծություններ</p>
	<p>3. Մշակել ԳԿՄԿ գործունեության մեջ շահակիցների մասնակցության աճին ուղղված նոր քաղաքականություն</p>	<p>Պլանավորման փուլում է</p>	<p>Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին ՈԱ բաժին Ուսանողական խորհուրդ</p>	<p>ԳԿՄԿ գործունեության բոլոր ոլորտներում շահակիցների մասնակցության ավելացման պահանջի հստակեցում</p>	<p>Տնօրեն</p>	<p>05-08.2018</p>	<p>Գիտական խորհրդի արձանագրություն Շահակիցների հետ հարաբերությունների նոր հաստատված քաղաքականություն</p>
	<p>4. Հստակեցնել շահակիցների կարիքների ուսումնասիրման քաղաքականությունը և վերանայել ընթացակարգերը</p>	<p>Պլանավորման փուլում է</p>	<p>Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին ՈԱ բաժին Ուսանողական խորհուրդ</p>	<p>Շահակիցների կարիքների ուսումնասիրման վերանայված քաղաքականություն և ընթացակարգեր</p>	<p>Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ</p>	<p>09-11.2018</p>	<p>Շահակիցների կարիքների ուսումնասիրման հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր</p>

	5. Վերանայել կենտրոնի նպատակների և խնդիրների իրականացման, գնահատման և բարելավման գործընթացներին շահակիցների մասնակցության ընթացակարգերը	Պլանավորման փուլում է	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին ՈԱ բաժին Ուսանողական խորհուրդ	Կենտրոնի գործընթացներին շահակիցների մասնակցության ավելացմանը ուղղված նոր ընթացակարգեր	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	12.2018-02.2019	Կենտրոնի գործընթացներին շահակիցների մասնակցության հաստատված նոր ընթացակարգեր
	6. Մշակված մեխանիզմների և ընթացակարգերի փորձարկում	Պլանավորման փուլում է	Որակի ապահովման բաժին	Մշակված մեխանիզմների և ընթացակարգերի արդյունավետության գնահատում	ՈԱ բաժնի պետ	03-07.2019	Փորձարկված մեխանիզմների և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություններ
	7. Վերլուծությունների հիման վրա բարելավված մեխանիզմների և ընթացակարգերի կիրարկում	Պլանավորման փուլում է	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին	Փորձարկված մեխանիզմներ և ընթացակարգեր	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	09. 2019	Բարելավված ընթացակարգերի առկայություն կայքում
<b>3.Կենտրոնի կողմից իրականացվող մասնագիտությունների համար մշակել Որակավորումների սեփական շրջանակ</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Ծրագրերի ղեկավարներ	Գործող աշխատանքային խումբ	Ուսումնական մասի պետ	01. 2018	Խմբի ձևավորման հրաման Արձանագրություններ
	2. Որակավորումների սեփական շրջանակի կառուցվածքի վերաբերյալ պահանջների և	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Որակավորումների սեփական շրջանակի կառուցվածքի հստակեցված	Աշխատանքային խմբի ղեկավար	01-03. 2018	Հաստատված պահանջներ և ձևաչափ

	ձևաչափի մշակում			պահանջներ և ձևաչափ			
	3. Կենտրոնի կողմից իրականացվող բոլոր մասնագիտությունների համար Որակավորումների սեփական շրջանակի մշակում	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Ամբիոնների վարիչներ Ծրագրերի ղեկավարներ	Որակավորումների շրջանակի առկայություն բոլոր մասնագիտությունների համար	Ուսումնական մասի պետ	04-12. 2018	Որակավորումների հաստատված շրջանակներ բոլոր մասնագիտությունների համար
	4. ԳԿՄԿ կրթական ծրագրերի համապատասխանեցում որակավորումների սեփական շրջանակին	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Ամբիոնների վարիչներ Ծրագրերի ղեկավարներ	ԳԿՄԿ կրթական ծրագրերի համապատասխանություն որակավորումների սեփական շրջանակին	Ուսումնական մասի պետ	01-08.2019	Կրթական ծրագրերի ՈՍՇ համապատասխանության վերլուծություններ

**II. Կառավարումն ու վարչարարությունը**

<p><b>ԽՆԴԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ</b></p> <p>ԳԿՄԿ-ի Կառավարման համակարգում առկա են մի շարք բացթողումներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում առավելագույնս լավ իրականացնել Կենտրոնի ղեկավարումն ու վարչարարությունը, ուստի խնդիր է դրվում նախ Կենտրոնի կառուցվածքը համապատասխանեցնել ռազմավարական ծրագրի նպատակներին, ապա հստակեցնել բոլոր ստորաբաժանումների պատասխանատվությունները, ներդնել պաշտոնների անձնագրերի համակարգ, հասնել կառավարման համակարգի արդյունավետությանը:</p>	<p><b>ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ</b></p> <p>Փորձագիտական այցից հետո ուսումնասիրվել և գնահատվել է ԳԿՄԿ-ի ՌԾ-ի առաքելությունն և նպատակները, կառավարման համակարգի առկա էությունը և բարելավման հնարավորությունները, կառուցվածքի համապատասխանությունը ԳԿՄԿ ռազմավարական ծրագրի նպատակներին:</p> <p>Բացահայտվել է, որ անհրաժեշտ է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Վերլուծել և գնահատել Կենտրոնի կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նպատակներին և կառավարման համակարգի արդյունավետությունը:</li> <li>2) Հստակեցնել բոլոր ստորաբաժանումների պատասխանատվությունները, ներդնել</li> </ol>
--	---

	<p>պաշտոնների անձնագրերի համակարգ,</p> <ol style="list-style-type: none"> <li>3) Ղեկավար պաշտոնյաների գործառույթների հստակեցման միջոցով՝ մարդկային ռեսուրսներ տրամադրել Կենտրոնի գիտաուսումնական աշխատանքները, ինչպես նաև կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչները համակարգելու համար,</li> <li>4) Մշակել կառավարման էթիկայի նորմեր,</li> <li>5) Ապահովել դասախոսների և ուսանողներին ավելի լայն և գործնական մասնակցությունը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործառույթներում,</li> <li>6) Մշակել ռազմավարական ծրագրի և կենտրոնի պլանների գնահատման և վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնել ՌԾ մշտադիտարկում և գնահատում,</li> <li>7) Վերանայել Կենտրոնի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը բոլոր գործընթացներում,</li> <li>8) Մշակել արտաքին գործոնների ազդեցության և Կենտրոնի գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, ըստ այդ ցուցանիշների իրականացնել տարեկան գնահատումներ և վերլուծություններ,</li> <li>9) Հստակեցնել Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարման և արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվությունը, մշակել որակի ապահովման անհրաժեշտ մեխանիզմները:</li> </ol>
--	--

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
<b>4.Վերլուծել և գնահատել Կենտրոնի կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նպատակներին և կառավարման համակարգի արդյունավետությունը</b>	1. Ձևավորել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրինություն Դասախոսական կազմ Ուսանողական խորհուրդ	Գործող աշխատանքային խումբ	Տնօրեն	09.2017	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան



	2. Մշակել Կենտրոնի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ցուցիչներ	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ  Արտաքին փորձագետներ	Կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ցուցիչների առկայություն	Տնօրեն	10-12.2017	ԳԽ-ի կողմից հաստատված կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ցուցիչների
	3. Իրականացնել Կենտրոնի գործող կառուցվածքի արդյունավետության գնահատում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Կառավարման համակարգի արդյունավետության գնահատումը ըստ մշակված ցուցիչների	Տնօրեն	01-04.2018	Կառավարման համակարգի արդյունավետության գնահատման հաշվետվություն՝ փոփոխություններ ի առարարկներով  ԳԽ-ում հաշվետվության քննարկման նիստի արձանագրություն
	4. Ուսումնասիրել ԳԿՄԿ ՌԾ նպատակների և խնդիրների լուծման համար անհրաժեշտ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնադիր փաստաթղթերով նախատեսված մարմինների և ստորաբաժանումների համապատասխանությունը Կենտրոնի գործող կառուցվածքին	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	ԳԿՄԿ ՌԾ նպատակների և խնդիրների լուծմանը Կենտրոնի գործող կառուցվածքի համապատասխանության գնահատումը	Փոխտնօրեն	05-07-2018	Կառավարման համակարգի համապատասխանության գնահատման հաշվետվություն՝ փոփոխություններ ի առարարկներով  ԳԽ-ում հաշվետվության քննարկման նիստի արձանագրություն

	5. ԳԿՄԿ կառուցվածքի համապատասխանեցում ռազմավարական ծրագրի նպատակներին	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	ԳԿՄԿ ՌԾ նպատակներին համապատասխանեցված նոր կառուցվածք	Տնօրեն	08--10.2018	ԳԱԱ ԳԿՄԿ հաստատված նոր կառուցվածք  ԳԽ-ում կառուցվածքի քննարկման նիստի արձանագրություն
<b>5. Հստակեցնել բոլոր ստորաբաժանումների պատասխանատվությունները, ներդնել պաշտոնների անձնագրերի համակարգ</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Տնօրինություն, ԳԿՄԿ կադրերի բաժին Իրավախորհրդատու Ստորաբաժանումների ղեկավարներ	Գործող աշխատանքային խումբ	Տնօրեն	01.2018	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան
	2.Ըստ ԳԿՄԿ նոր կառուցվածքի՝ կատարել փոփոխություններ ստորաբաժանումների աշխատանքները կանոնակարգող փաստաթղթերում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Բոլոր ստորաբաժանումների համար հստակեցված գործառույթներ ըստ ԳԿՄԿ նոր կառուցվածքի	Փոխտնօրեն, Իրավախորհրդատու	02-07.2018	Ըստ նոր կառուցվածքի ԳԿՄԿ ստորաբաժանումների հաստատված և հրապարակված կանոնակարգեր
	3. Հստակեցնել ԳԿՄԿ ղեկավար պաշտոնյաների իրավասությունները	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ուսումնական և գիտահետազոտական բաղադրիչներով տարանջատված պատասխանատուների առկայություն	Տնօրեն	06-07.2018	Գործառույթների նկարագրություններ  Տնօրենի հրամաններ

	3.Ըստ հստակեցված կառուցվածքային միավորների՝ ներդնել պաշտոնների անձնագրեր	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ Կադրերի բաժնի պետ Իրավախորհրդատու	Պաշտոնի անձնագրերի առկայություն աշխատակիցների համար	Տնօրեն	08-12.2018	Հաստատված պաշտոնների անձնագրեր
<b>6.Մշակել կառավարման էթիկայի նորմեր</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Իրականարած գործողություն:	Իրավախորհրդատու Դասախոսական կազմ Ուսանողական խորհուրդ	Ձևավորված աշխատանքային խումբ	Տնօրեն	08.2017	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան
	2.Կառավարման էթիկայի ընդունված նորմերի ուսումնասիրում	Իրավախորհրդատուի կողմից ուսումնասիրման փուլում է:	Աշխատանքային խումբ	Կառավարման էթիկայի նորմերի լավ փորձի օրինակներ	Աշխատանքային խմբի ղեկավար	05-09.2017	Կառավարման էթիկայի նորմերի ուսումնասիրության հաշվետվություն
	3. ԳԿՄԿ կառավարման մարմինների էթիկայի կանոնագրքի նախագծի մշակում	Ընթացքի մեջ է:	Աշխատանքային խումբ Արտաքին փորձագետ	ԳԿՄԿ էթիկայի կանոնագրքի նախագծի առկայություն	Աշխատանքային խմբի ղեկավար	05-09.2018	Էթիկայի կանոնագրքի նախանական տարբերակ
	4. Էթիկայի կանոնագրքի նախագծի քննարկում ստորաբաժանումներում	Պլանավորված է:	Աշխատանքային խումբ  Ստորաբաժանումների ղեկավարներ	ԳԿՄԿ էթիկայի կանոնագրքի նախագծի վերաբերյալ կարծիքներ	Տնօրեն	09-10.2017	Ստորաբաժանումներում նախագծի քննարկման արձանագրություններ՝ առաջարկություններով

	5.Նախագծի քննարկման արդյունքում ԳԿՄԿ կառավարման մարմինների էթիկայի կանոնագրքի բարելավում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	ԳԿՄԿ էթիկայի մշակված կանոնագիրք	Աշխատանքային խմբի ղեկավար	11-12.2017	Քննարկումների արձանագրություններ ԳԿՄԿ էթիկայի կանոնագրքի բարելաված տարբերակի առկայություն
	6. Էթիկայի կանոնագրքի նախագծի հաստատում Գիտական խորհրդում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Հաստատված էթիկայի կանոնագիրք	Տնօրեն	12.2017	ԳԻՄ-ում նախագծի քննարկման արձանագրություն էթիկայի կանոնագրքի հաստատման որոշում
	7. ԳԿՄԿ կառավարման մարմինների էթիկայի կանոնագրքի ներդրում	Պլանավորման փուլում է	Տնօրինություն Իրավախորհրդատու Դեկանատ	ԳԿՄԿ էթիկայի Շահակիցների հասանելի կանոնագիրք	Տնօրեն	01.2018	ԳԿՄԿ էթիկայի կանոնագրքի առկայություն կայքում
<b>7.Ապահովել դասախոսների և ուսանողների ավելի լայն և գործնական մասնակցությունը իրենց վերաբերյալ որոշումների կայացման</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Իրավախորհրդատու, ՈԱ բաժին, Դասախոսական կազմ Ուսանողական խորհուրդ	Ձևավորված աշխատանքային խումբ	Իրավախորհրդատու	09.2017	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան

գործառույթներում	2. Ուսումնասիրել ԳԿՄԿ կառավարման համակարգի գործող կանոնակարգերն ու ընթացակարգերը	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում դասախոսների և ուսանողների մասնակցության կանոնակարգումները	Իրավախորհրդատու	10.2017-01.2018	Աշխատանքային խմբի զեկույց  Գիտական խորհրդում զեկույցի քննարկման արձանագրություն
	3. Ուսումնասիրել դասախոսների և ուսանողների կարծիքը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության վերաբերյալ	Պլանավորման փուլում է	Դասախոսական կազմ Ուսանողներ Ուսանողական խորհուրդ	Դասախոսների և ուսանողների կարծիքը որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության ավելացման վերաբերյալ	Աշխատանքային խմբի ղեկավար  ՈԱ Բաժնի պետ	02-04.2018	Ֆոկուս-խմբային հանդիպումների արձանագրություններ՝ առաջարկություններով  Մասնակիցների ցանկեր
	4. Վերանայել գործող կանոնակարգեր՝ հստակեցնելով և ավելացնելով դասախոսների և ուսանողների ավելի լայն և գործնական մասնակցությունը կառավարման գործընթացներում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Վերանայված կանոնակարգեր՝ կառավարման գործընթացներին ներքին շահակիցների մասնակցության ավելացումով	Իրավախորհրդատու  Աշխատանքային խմբի ղեկավար	05-07.2018	Հաստատված նոր կանոնակարգեր և ընթացակարգեր

	5. Իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ կանոնակարգերով դասախոսներին և ուսանողներին վերապահված կառավարման հնարավորությունների մասին	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին	Իրազեկ ուսանողություն և դասախոսական կազմ	ՈԱ բաժնի պետ, աշխատանքային խումբ	08.2018-08.2019	Հանդիպումների արձանագրություններ  Նոր կանոնակարգեր և ընթացակարգերի առկայություն կայքում
<b>8.Մշակել ռազմավարական ծրագրի և կենտրոնի պլանների գնահատման և վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնել ՌԾ մշտադիտարկում և գնահատում</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Տնօրինություն Դեկանատ Իրավագիտության ամբիոն Ամբիոնների վարիչներ ՈԱ բաժին	Ձևավորված աշխատանքային խումբ	Փոխտնօրեն	09.2017	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան
	2.Մշակել կենտրոնի պլանների /այդ թվում Ռազմավարական/ գնահատման և վերանայման քաղաքականության	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	ՊԻԳԲ սկզբունքի մոտեցումների կիրառում ռազմավարական և այլ պլանավորման գործընթացների նկատմամբ	Աշխատանքային խմբի ղեկավար	09.2017-11.2017	Պլանների գնահատման և վերանայման հաստատված քաղաքականություն
	3. Մշակել կենտրոնի պլանների գնահատման և վերանայման ընթացակարգ	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Պլանների գնահատումը և վերանայումը կարգավորող ընթացակարգ՝ գնահատման ցուցիչներով և հաշվետվություններ ի ձևաչափերով	Իրավախոր հրդատու	12.2017-02.2018	Պլանների գնահատման և վերանայման հաստատված ընթացակարգ  ԳԽ-ում քննարկումների արձանագրություն

	4. Պլանների գնահատման և վերանայման ընթացակարգի ներդրում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Գործող ընթացակարգով գնահատված և վերանայված պլաններ	Փոխսնօրեն	03.2018-04.2018	Պլանների գնահատման և վերանայման ընթացակարգի կիրարկման հրաման Պլանների գնահատման և վերլուծության հաշվետվություններ
	5.Գործող ընթացակարգերով ՌԾ գնահատում, մշտադիտարկում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ Որակի ապահովման մշտական հանձնաժողով	ՌԾ մշտադիտարկման և գնահատման արդյունքներ	Տնօրեն	05-07.2018	ՌԾ մշտադիտարկման և գնահատման արդյունքների վերլուծություններ  ԳԽ-ում քննարկման արձանագրություն
<b>7.Վերանայել Կենտրոնի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը բոլոր գործընթացներում</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Տնօրինություն ՈԱ բաժին Իրավախորհրդատու Դասախոսական կազմ Ուսանողական խորհուրդ	Ձևավորված աշխատանքային խումբ	Տնօրեն	02.2018	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման
	2.Մշակել գործողությունների պլան՝ համաձայն որի կվերանայվի Կենտրոնի վարչարարությունը ՊԻԳԲ սկզբունքով	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Մշակված գործողություններ և ժամանակացույց	Աշխատանքային խմբի ղեկավար		02.2018-05.2018

	3.Նախապատրաստել ՊԻԳԲ շրջափուլի բոլոր փուլերի համար անհրաժեշտ ձևաչափերը և ընթացակարգերը	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ  ՈԱ բաժին Արտաքին փորձագետներ	Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում փուլերի կազմակերպման փաստաթղթային փաթեթների առկայություն	Տնօրեն	06-10.2018	ՊԻԳԲ շրջափուլի բոլոր փուլերի համար ԳԽ կողմից հաստատված ձևաչափեր և ընթացակարգեր
	4.Իրականացնել աշխատակիցների վերապատրաստումներ	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին Արտաքին փորձագետներ	Վերապատրաստված աշխատակազմ	ՈԱ բաժնի պետ	11-12.2018	Մասնակիցների ցանկեր  Վերապատրաստման նյութեր
	5.ՊԻԳԲ սկզբունքի ներդրում ԳԿՄԿ հիմնական գործընթացներում	Պլանավորման փուլում է	Փոխտնօրեն Ստորաբաժանումների ղեկավարներ Ուսումնական մաս Դեկանատ Ամբիոնների վարիչներ ՈԱ բաժին	ՊԻԳԲ սկզբունքի ներդրում ԳԿՄԿ վարչարարության մեջ՝ համաձայն գործողությունների պլանի ժամանակացույցի	Տնօրեն	01-12.2019	Աշխատանքային պլանով նախատեսված պլաններ, իրականացման հաշվետվություններ և գնահատումներ
	6.ԳԿՄԿ հիմնական գործընթացներում ՊԻԳԲ սկզբունքի ներդրման գնահատման մեխանիզմների մշակում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ Ստորաբաժանումների ղեկավարներ ՈԱ բաժին	ԳԿՄԿ հիմնական գործընթացներում ՊԻԳԲ սկզբունքի գնահատման մեխանիզմների առկայություն	Փոխտնօրեն	09-12.2019	ՊԻԳԲ սկզբունքի գնահատման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգ
	7.ԳԿՄԿ հիմնական գործընթացներում ՊԻԳԲ սկզբունքի ներդրման գնահատում	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին	Գնահատման արդյունքներ և բարելավման առաջարկներ	Որակի բաժնի պետ	01-06.2020	ՊԻԳԲ սկզբունքի ներդրման արդյունքների վերլուծություններ ԳԽ-ում



							հաշվետվությունների քննարկման արձանագրություններ
	8.ԳԿՄԿ հիմնական գործընթացներում ՊԻԳԲ սկզբունքի ներդրման բարելավում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Բարելավման առաջարկների իրականացման գործողություններ և ժամանակացույց	Փոխսնօրեն	07-09.2020	Բարելավման գործողությունների հաստատված պլան
<b>8. Հստակեցնել Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարման և արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվությունը</b>	1.Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս ՈԱ Բաժին SS Բաժին Դասախոսական կազմ Ուսանողական խորհուրդ	Ձևավորված աշխատանքային խումբ	Փոխսնօրեն	09.2018	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան
	2.Մշակել կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչներ	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ ՈԱ Բաժին Կրթական ծրագրերի ղեկավարներ	Կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչների առկայություն	Ուսումնական մասի պետ	10-12.2018	Հաստատված կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչներ
	3.Շտ կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչների մշակել անհրաժեշտ տեղեկատվության ցանկը	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ ՈԱ Բաժին Կրթական ծրագրերի ղեկավարներ SS Բաժին	Կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը գնահատել թույլ տվող տեղեկատվության ցանկ	Ուսումնական մասի պետ	01-02.2019	Հաստատված տեղեկատվության ցանկ՝ ըստ կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչների

	4. Ըստ Կենտրոնում իրականացվող այլ գործընթացների գնահատման ցուցիչների մշակել անհրաժեշտ տեղեկատվության ցանկը	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ ՈԱ քաժին	Կենտրոնի այլ գործընթացների իրականացման արդյունավետությունը գնահատել թույլ տվող տեղեկատվության ցանկ	Փոխտնօրեն	03-04.2019	Հաստատված տեղեկատվության ցանկ՝ ըստ Կենտրոնում իրականացվող այլ գործընթացների արդյունավետության գնահատման ցուցիչների
	5.Մշակել ընթացակարգ՝ կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման վերաբերյալ	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ ՈԱ քաժին SS քաժին	Տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ	Իրավախորհրդատու	05-06.2019	ԳԽ-ում հարցի քննարկման արձանագրություն  Տեղեկատվության հավաքագրման հաստատված ընթացակարգ
	6.Գործարկել կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ընթացակարգերը	Պլանավորման փուլում է	Փոխտնօրեն Ստորաբաժանումների ղեկավարներ Կրթական ծրագրերի ղեկավարներ	Կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն	Տնօրեն	09.2019-06.2021	Տվյալների հենքեր  Հաշվետվություններ  Հանդիպումների արձանագրություններ
	7.Իրականացնել կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատումներ	Պլանավորման փուլում է	Փոխտնօրեն Ստորաբաժանումների ղեկավարներ Կրթական ծրագրերի ղեկավարներ	Կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատումներ	Փոխտնօրեն	09-12.2021	Կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերլուծություններ

								Քննարկումների արձանագրություններ
--	--	--	--	--	--	--	--	----------------------------------

**III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

<p><b>ԽՆԴԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ</b></p> <p>Կենտրոնի մասնագիտական կրթական ծրագրերում առկա էին մի շարք խնդիրներ, որոնք հնարավորություն չէին ընձեռում առավելագույնս ապահովել ուսանողների կրթական վերջնարդյունքների գնահատումը և դասավանդում-ուսումնառություն-գնահատում գործընթացի միասնականությունը: Բացակայում են կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման մեխանիզմները և եվրոպական կրթափորձին համահունչ մասնագիտական ծրագրերը:</p> <p>Անհրաժեշտ է Կենտրոնում մշակել կրթական ծրագրերի և այլ գործընթացների բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգեր՝ լիարժեք օգտագործելու միջազգային առաջատար փորձը, Կենտրոնի ծրագրերը համադրելի դարձնելու արտասահմանյան համալսարաններում իրականացվող համանման և եվրոպական առաջավոր կրթափորձին համահունչ նոր մասնագիտական կրթական ծրագրերի հետ, մշակել ուսանողների գիտելիքների, կարողությունների ու գործընթացի մշտական գնահատման ու վերանայման մեխանիզմներ:</p>	<p><b>ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ</b></p> <p>Փորձագիտական այցից հետո ուսումնասիրվել և գնահատվել է Կենտրոնի մասնագիտական կրթական ծրագրերի առկա իրավիճակը, նախանշվել են դրանց գնահատման և վերանայման բոլոր միջոցառումները, որոնք կապահովեն դրանց մշտական բարելավումը արտաքին և ներքին շահեկիցների արձագանքների և առաջավոր կրթափորձի հետ համեմատության հիման վրա: Բացահայտվել է, որ անհրաժեշտ է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Հստակեցնել Կենտրոնի ՄԿԾ-ների վերջնարդյունքները բենչմարքինգի, այնպես էլ աշխատաշուկայի, ներքին ու արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրման հիման վրա,</li> <li>2) Կանոնակարգել ՄԿԾ-երը մշտադիտարկելու և վերանայելու գործընթացները: Այս գործընթացները պետք է հիմնված լինեն ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման հավաստի գործիքակազմի մշակման և կիրառման վրա:</li> <li>3) Բարելավել Կենտրոնի ՄԿԾ-ների առարկաների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները:</li> <li>4) Այլ հետազոտական կամ ուսումնական հաստատությանների, արտադրությունների հետ կապված ծրագրերի իրականացում:</li> <li>5) Բարելավել ՄԿԾ-ի բովանդակային և կառուցվածքային նորացման գործընթացում աշխատաշուկայի, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և վերլուծության մեխանիզմները:</li> <li>6) Գնահատման համակարգում և դասընթացների մասնագրերում վերջնարդյունքների և թեզերի գնահատման չափանիշների վերանայում</li> <li>7) Գնահատման համակարգում և դասընթացների մասնագրերում վերջնարդյունքների և թեզերի գնահատման չափանիշների վերանայում</li> <li>8) Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ կրթական ծրագրերի մշտադիտարկման իրականացում:</li> </ol>
--	--

<b>Գործողություն</b>	<b>Քայլեր</b>	<b>Ընթացիկ</b>	<b>Ռեսուրս</b>	<b>Վերջնարդյունք</b>	<b>Պատասխ</b>	<b>Ժամանա</b>	<b>Վերջնարդյունքների</b>
----------------------	---------------	----------------	----------------	----------------------	---------------	---------------	--------------------------

		վիճակը			անատու	կահատված	զնահատման ցուցիչներ
<b>9.Միջազգային և հայաստանյան բուհերի համապատասխան ՄԿԾ-ների հետ Կենտրոնի ՄԿԾ-ների համեմատում և առաջավոր փորձի յուրացում</b>	1. Ամբիոններում ձևավորել համապատասխան աշխատանքային խմբեր, որոնք կիրականացնեն ՄԿԾ-ների բենչմարքինգ	Ընթացքի մեջ է: Առկա է խմբերի ձևավորման հրամանը, մի քանի ամբիոններում արդեն իսկ կան ձևավորված խմբեր, որոնք իրականացնում են ՄԿԾ-ների բենչմարքինգ	Ամբիոնների վարիչներ Դասախոսներ	Գործող աշխատանքային խմբեր	Ուսումնական մասի պետ	02-04.2017	Խմբերի ձևավորման մասին տնօրենի հրաման Ամբիոնների նիստերի արձանագրություններ
	2. Ճշտել այն ՄՈՒՀ-երի ցանկը, որոնց ՄԿԾ-ների հիման վրա կատարվում է բենչմարքինգ	Ընթացիկ գործողություն	Աշխատանքային խմբեր	Բուհերի և ընտրված ՄԿԾ-ների ցանկեր	Ուսումնական մասի պետ  Աշխատանքային խմբերի ղեկավարներ	Ուսումնական մասի պետ	05-09.2017

	3. Կենտրոնի և ընտրված բուհերի ՄԿԾ-ների բերչմարքինգի իրականացում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խմբեր	Ընտրված բուհերի ՄԿԾ-ների լավագույն փորձի վերհանում՝ փոփոխությունների առաջարկներով	Աշխատանքային խմբերի ղեկավարներ	10.2017-02.2018	Բենչմարքինգի հաշվետվություններ ըստ կրթական ծրագրերի՝ բարելավումների առաջարկներով
<b>10. Կենտրոնի ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխան եցում բենչմարքինգի արդյունքներին և ներքին ու արտաքին շահակիցների պահանջներին</b>	1. Ուսումնասիրել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերլուծության մեխանիզմների այլ բուհերի փորձը	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին Ուսանողական խորհուրդ	Շահակիցների կարիքների վերլուծության մեխանիզմների լավ փորձի օրինակներ՝ բարելավումների առաջարկներով	ՈԱ բաժնի պետ	04-06.2018	Շահակիցների կարիքների վերլուծության մեխանիզմների ուսումնասիրության հաշվետվություն՝ բարելավումների առաջարկներով
	2. Վերանայել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերլուծության մեխանիզմները	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին Ուսանողական խորհուրդ	Շահակիցների կարիքների վերլուծության մեխանիզմների տեղայնացված լավ փորձը	ՈԱ բաժնի պետ	07-09.2018	Շահակիցների կարիքների վերլուծության հաստատված մեխանիզմներ
	3. Մշակել նոր ընթացակարգեր և գործիքներ շահակիցների կարիքների վերլուծության համար	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին SS բաժին Ուսանողական խորհուրդ	Շահակիցների կարիքների վերլուծության նոր ընթացակարգեր և գործիքներ	Իրավագիտության ամբիոնի վարիչ, Սոցիոլոգ	10-12.2018	Շահակիցների կարիքների վերլուծության հաստատված ընթացակարգեր և գործիքներ
	4. Կրթական վերջնարդյունքների վերաբերյալ շահակիցների /ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուներ/	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին SS բաժին Ուսանողական խորհուրդ	Ներքին և արտաքին շահակիցների առաջարկությունները կրթական վերջնարդյունքների վերաբերյալ	ՈԱ բաժնի պետ	01-06.2019, պարբերաբար	Կրթական վերջնարդյունքների վերաբերյալ շահակիցների կարծիքների վերլուծություն՝ փոփոխությունների

կարծիքների ուսումնասիրություն							առաջարկներով
5. Ամբիոններում ձևավորել ՄԿԾ-ների վերջնարդյունքների շահակիցների պահանջներին համապատասխանեցման աշխատանքային խմբեր	Պլանավորման փուլում է	Ամբիոնների վարիչներ Դասախոսներ	Գործող աշխատանքային խմբեր	Ուսումնական մասի պետ	09-12.2019		Խմբերի ձևավորման մասին տնօրենի հրաման Ամբիոնների նիստերի արձանագրություններ
6. Գործող ՄԿԾ-ների վերջնարդյունքների վերանայում բենչմարքինգի վերլուծությունների և շահակիցների կարիքների ուսումնասիրման արդյունքներին համապատասխան	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խմբեր	Գործող ՄԿԾ-ների շահակիցների կարիքներին համապատասխան վերանայված վերջնարդյունքներ	Ուսումնական մասի պետ	05-07.2020		Որակավորումների սեփական շրջանակին համապատասխանեցված վերջնարդյունքների նախնական ցանկ  Ամբիոնների նիստերի արձանագրություններ
7. ՄԿԾ-ների վերջնարդյունքների նախնական ցանկի քննարկումներ շահակիցների հետ	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Դեկանատ ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին SS բաժին Ուսանողական խորհուրդ	Շահակիցների հետ համաձայնեցված ՄԿԾ-ների վերջնարդյունքներ	Ուսումնական մասի պետ	08-10.2020		Քննարկումների արձանագրություններ  ՄԿԾ-ների հաստատված վերջնարդյունքներ
8. ՄԿԾ-ների բովանդակության վերանայում և համաձայնեցում վերջնարդյունքների նոր ցանկին	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խմբեր Դասախոսական կազմ	ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան դասընթացների վերջնարդյունքներ	Ուսումնական մասի պետ  Ամբիոնների	11.2020-04.2021		Ամբիոնների նիստերի արձանագրություններ  ՄԿԾ-ների մասնագիտական փորձաքննության

				և բովանդակություն	վարիչներ		արդյունքներ Բարելավված ՄԿԾ-ներ
<b>11. Այլ հետազոտական կամ ուսումնական հաստատությանն էրի, արտադրություններ ի հետ կապված ծրագրերի իրականացում</b>	1. Ստեղծել աշխատանքային խումբ	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Ամբիոնների վարիչներ Միջազգային կապերի բաժին	Ձևավորված աշխատանքային խումբ	Ուսումնական մասի պետ	01.2018	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան
	2. Ուսումնասիրել Կենտրոնի հնարավորությունները համատեղ ծրագրերի իրականացման համար	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Կենտրոնի կողմից առաջարկվող մասնագիտությունների կամ ռեսուրսների, հնարավոր շահակիցների ճշտված ցանկ	Փոխտնօրեն	02-04.2018	ԳԽ-ում քննարկված մասնագիտությունների կամ ռեսուրսների ցանկ  Հնարավոր շահակիցների ցանկ
	3. Կազմակերպել հանդիպումներ պոստենցիալ գործընկեր ուսումնական և արտադրական կազմակերպությունների հետ	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Հնարավոր գործընկերների հստակեցում	Տնօրեն	05-08.2018	Հանդիպումների մասնակիցների ցանկ Հանդիպումների արձանագրություններ Համագործակցության պայմանագրեր

	4. Համատեղ աշխատանքային խմբերի ձևավորում՝ ծրագրերի մշակման համար	Պլանավորման փուլում է	Ամբիոնների վարիչներ Արտաքին շահակիցներ	Գործող աշխատանքային խմբեր	Ուսումնական մասի պետ	09.2018	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման Խմբի աշխատանքային պլան
	5. Համատեղ ծրագրերի մշակում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խմբեր	Ներդրման պատրաստ կրթական ծրագրերի փաթեթներ	Ուսումնական մասի պետ	10.2018-05.2019	Լիցենզավորված 3 համատեղ ծրագրեր
	6. Համատեղ ծրագրերի ներդրում	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Դեկանատ Գործընկեր կազմակերպություն	Այլ ուսումնական կամ արտադրական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրեր	Տնօրեն	09.2019	Գործող համատեղ ծրագրեր
<b>12. Բարելավել դասավանդման, ուսումնառության մեթոդները և գնահատման համակարգը Կենտրոնում</b>	1. Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ԳԿՄԿ քաղաքականություն	Պլանավորման փուլում է	Ընդհանուր մանկավարժության ամբիոն Հոգեբանության ամբիոն	ԳԿՄԿ – ում դասավանդման և ուսումնառության մեթոդների ըստ կրթական վերջնարդյունքների ընտրության հստակեցված մոտեցումներ	Դեկան	09-11-2017	Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հաստատված քաղաքականություն
	2. Մշակել գնահատման մեթոդների ընտրության ԳԿՄԿ քաղաքականություն	Պլանավորման փուլում է	Մանկավարժության և սոցիոլոգիայի ամբիոն Մասնագիտական ամբիոններ	ԳԿՄԿ – ում գնահատման մեթոդների ըստ կրթական վերջնարդյունքների	Դեկան	12.2017-03.2018	Գնահատման և ուսումնառության մեթոդների ընտրության հաստատված



				ընտրության հստակեցված մոտեցումներ			քաղաքականություն
3. Վերանայել դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների վերաբերյալ ուսանողների և դասախոսների կարծիքը ուսումնասիրող հարցաշարերը	Իրականացման փուլում է	ՈԱ բաժին Մանկավարժության և սոցիոլոգիայի ամբիոն Շոգերանության ամբիոն Արտաքին փորձագետներ	ՄԿԾ-ների առանձնահատկությունները հաշվի առնող հարցաշարեր	ՈԱ բաժնի պետ	04-07.2018	Վերանայված հարցաշարեր	
4. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների վերաբերյալ ուսանողների և դասախոսների կարծիքը	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին ՈԱ ամբիոնային պատասխանատուներ	Կիրառվող դասավանդման և գնահատման մեթոդների արդիունավետության գնահատումը	ՈԱ բաժնի պետ	09.2018-11.2018	Հարցումների արդյունքներ  Հարցումների արդյունքների վերլուծություններ	
5. Կենտրոնի ՄԿԾ-ներում փաստացի կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ուսումնասիրություն	Իրականացման փուլում է	Դեկանատ ՈԱ բաժին Ամբիոնների վարիչներ Դասախոսներ Ուսանողական խորհուրդ	Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետության և ուսանողակենտրոնության գնահատում	Դեկան	12.2018-06.2019	Ֆոկուս-խմբային հանդիպումների արձանագրություններ  Դասալսումների արդյունքների վերլուծություններ	
6. Վերլուծությունների արդյունքների հիման վրա և գործող քաղաքականության շրջանակներում վերանայել ԳԿՄԿ-ում կիրառվող դասավանդման	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս ՈԱ բաժին Ամբիոնների վարիչներ Դասախոսներ	Վերանայված դասավանդման և ուսումնառության և հստակ մեթոդների առկայության դասընթացների ծրագրերում ամեն	Ուսումնական մասի պետ	07.2019-12.2019	Վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ պարունակող հաստատված	

	և ուսումնառության մեթոդները			մի վերջնարդյունքի համար			դասընթացների ծրագրեր Ուսանողների գոհունակության հարցումներ կիրառվող մեթոդների արդյունավետությունից
	7. Ձևավորել գնահատման համակարգի վերանայման աշխատանքային խումբ, մշակել աշխատանքային պլան	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս ՈԱ բաժին Ամբիոնների վարիչներ Դասախոսներ	Գործող աշխատանքային խումբ	Ուսումնական մասի պետ	01-02.2020	Խմբի ձևավորման հրաման Խմբի աշխատանքային պլան
	8. Այլ ուսումնական հաստատություններում կիրառվող գնահատման փորձի ուսումնասիրություն	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ուսումնառության բոլոր ձևերի արդյունքների գնահատման առաջավոր փորձի օրինակներ	Խմբի ղեկավար	03-04.2020	Աշխատանքային խումբ Նիստերի արձանագրություններ Վերլուծության հաշվետվություններ բարելավման առաջարկներով
	9. Մագիստրոսական թեզերի գնահատման չափանիշների վերանայում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ Ամբիոնների վարիչներ Դասախոսներ	Մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջներ և գնահատման չափանիշներ	Ուսումնական մասի պետ	05-06.2020	Մագիստրոսական թեզերի գնահատման հաստատված պահանջներ և չափանիշներ
	10. Վերլուծությունների արդյունքների հիման վրա վերանայել ԳԿՄԿ ուսանողների գնահատման համակարգը	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Մասնագիտական ամբիոնների վարիչներ	Գնահատման վերանայված համակարգ, որի միջոցով գնահատվում են	Ուսումնական մասի պետ	07-08.2020	Գնահատման համակարգի նախնական տարբերակ

				բոլոր կրթական վերջնարդյունքները			
11. Գնահատման համակարգի նախնական տարբերակի փորձարկում 2 ծրագրերի սահմաններում	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Դեկանատ Մասնագիտական ամբիոնների վարիչներ	2 ծրագրերի սահմաններում փորձարկված գնահատման նոր համակարգի արդյունավետության գնահատում	Ուսումնական մասի պետ	09.2020-03.2021	Գնահատման համակարգի նախնական տարբերակի փորձարկման արդյունքների հաշվետվություն փոփոխությունների առաջարկներով	
12. Փորձարկումների արդյունքների հիման վրա վերանայել ուսանողների գնահատման համակարգը	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Մասնագիտական ամբիոնների վարիչներ ՈԱ բաժին	Ուսանողների գնահատման փորձարկված համակարգ	Ուսումնական մասի պետ	04.2021-12.2021	Գնահատման հաստատված համակարգի առկայությունը կայքում Ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կիրառվող գնահատման համակարգի արդյունավետությունից	
13. Լրամշակված և վերանայված գնահատման համակարգի ներդրում	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Դեկանատ Մասնագիտական ամբիոնների վարիչներ	Նոր՝ լրամշակված գնահատման համակարգի առկայություն	Ուսումնական մասի պետ	01.2022	Հաստատված գնահատման նոր համակարգ  Ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կիրառվող գնահատման համակարգի	

<b>13.Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ կրթական ծրագրերի մշտադիտարկման իրականացում</b>	1. Ծրագրերի մշտադիտարկման խմբերի ձևավորում՝ ներառելով ներքին և արտաքին շահակիցներին	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Որակի ապահովման բաժին Ամբիոնի վարիչներ Դասախոսներ ուսումնական մաս Գործատուներ	Ձևավորված մշտադիտարկման խմբեր, որոնցում մասնակցում են շահակիցների ներկայացուցիչներ	Որակի ապահովման բաժնի պետ	2018 – 2019, պարբերաբար	օբյեկտիվությունից Ներքին և արտաքին շահակիցներ պարունակող մոնիտորինգի խմբերի ձևավորման հրաման
	2. Մոնիտորինգ իրականացնող խմբերի մասնակիցների վերապատրաստումներ	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս Որակի ապահովման բաժին Արտաքին փորձագետներ	Վերապատրաստված մոնիտորինգի խմբերի անդամներ	Ուսումնական մասի պետ, Որակի ապահովման բաժնի պետ	2018 – 2019 թթ.	Վերապատրաստման մասնակիցների ցանկեր Վերապատրաստման նյութեր
	3. Մոնիտորինգի պլանի, տվյալների հավաքագրման և հաշվետվությունների կազմման ձևաչափերի մշակում	Պլանավորման փուլում է	Ուսումնական մաս ՈԱ բաժին Մշտադիտարկման խմբեր Արտաքին փորձագետներ	Հստակեցված մոնիտորինգի պլան, տվյալների հավաքագրման և հաշվետվությունների ձևաչափեր	Ուսումնական մասի պետ	01-03.2019	Հաստատված մոնիտորինգի պլան և ժամանակացույց, տվյալների հավաքագրման և հաշվետվությունների ձևաչափեր
	4. Ամեն կիսամյակում գործող կրթական ծրագրերի 25%-ի չափով մոնիտորինգի իրականացում	Պլանավորման փուլում է	Մոնիտորինգի խմբեր ՈԱ բաժին	Տեղեկատվություն ծրագրերի իրականացման որակի մասին	Ուսումնական մասի պետ	04.2019-12.2021	Ըստ մոնիտորինգի պլանի գործողությունների արձանագրված քայլեր Առաջարկություններ և դիտողություններ պարունակող մոնիտորինգի հաշվետվություններ

**IV. Ուսանողները**

**ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ**

ԳԿՄԿ-ի Ինստիտուցիոնալ հավատարմագրման փաթեթում ներառված <<Ուսանողները>> բաժնում առկա էին մի շարք բացթողումներ, որոնք հնարավորություն չէին ընձեռում ամբողջությամբ վերհանել ուսանողների կրթական կարիքները, հաշվետու լինել ներքին և արտաքին շահակիցների առջև, լիարժեքորեն ապահովել կարիերայի կենտրոնի աշխատանքները: Թերի են ուսանողների ինքնակառավարման մակարդակը և նրանց առավել լայն ներգրավվածությունը կառավարման մարմիններում, մշակված չէ ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգը, ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:

**ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ**

Փորձագիտական այցից հետո ուսումնասիրվել և գնահատվել է <<Ուսանողները>> բաժնում առկա էին մի շարք բացթողումներ: Բացահայտվել է, որ անհրաժեշտ է.

- 1) Մշակել ուսանողների կրթական կարիքների վերհանման հատուկ քաղաքականություն և ընթացակարգեր,
- 2) Բարելավել կարիերայի կենտրոնի աշխատանքները, ապահովելով դրանց շարունակականությունը և հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև,
- 3) Ընդլայնել ուսանողների ինքնակառավարման մակարդակը, ապահովելով նրանց առավել լայն ներգրավվածությունը կառավարման մարմիններում իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործառնություններում,
- 4) Կիրարկել ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգը,
- 5) Մշակել ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
14.Մշակել ուսանողների կրթական կարիքների վերհանման հատուկ քաղաքականություն և ընթացակարգեր	1.Աշխատանքային խմբի ձևավորում	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին Մասնագիտական ամբիոններ  Ուսանողների ներկայացուցիչներ	Գործող աշխատանքային խումբ	ՈԱ բաժնի պետ	01.2018	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան

	2.Այլ բուհերի փորձի ուսումնասիրում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության և ընթացակարգերի լավ փորձի վերհանված օրինակներ	Աշխատանքային խմբի ղեկավար	01-06.2018	Այլ բուհերի փորձի ուսումնասիրությունների վերլուծություններ  Քննարկումների արձանագրություններ
	3.Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ԳԿՄԿ քաղաքականության և ընթացակարգերի մշակում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ Իրավագիտության ամբիոն ՈԱ բաժին Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին	Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության և ընթացակարգերի առկայություն	ՈԱ բաժնի պետ Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	07-09.2018	Ուսանողների կրթական կարիքների վերհանման հաստատված և հրապարակված քաղաքականություն և ընթացակարգեր
	4.Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված քաղաքականության կարգերի և ընթացակարգերի կիրարկում	Պլանավորման փուլում է	ՈԱ բաժին ՈԱ մշտական հանձնաժողով Մասնագիտական ամբիոններ	Գնահատման արդյունքներ /լրացված հարցաթերթեր, ֆոկուս խմբային հարցումների տվյալներ և այլն/	ՈԱ մշտական հանձնաժողով	09.2018-03.2019	Ուսանողների կարիքների գնահատման արդյունքներ վերլուծություններ  Ընթացակարգի գնահատման վերլուծություններ  Քննարկումների արձանագրություններ

	5.Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված քաղաքականության կարգերի և ընթացակարգերի բարելավում և կիրարկում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ Իրավագիտության ամբիոն ՈԱ բաժին	Նոր , բարելավված քաղաքականություն և ընթացակարգեր	ՈԱ բաժնի պետ	04-06.2019	Վերանայված քաղաքականության կարգերի և ընթացակարգերի առկայություն կայքում  Ընթացակարգի կիրարկման տնօրենի հրամանը
<b>15. Բարելավել կարիերայի կենտրոնի աշխատանքները, ապահովելով դրանց շարունակականությունը և հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև</b>	1.Ստեղծել շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին	Իրականացված գործողություն:	Տնօրինություն  Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին Կադրերի բաժին	Նորաստեղծ շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	02-04.2017	Բաժնի ստեղծման մասին ԳԽ որոշում
	2. Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի գործունեության կարգի մշակում, աշխատանքային պլանի ստեղծում	Իրականացված գործողություն	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին Ուսանողական խորհուրդ Իրավագիտության ամբիոն	Գործունեության կարգի, աշխատանքային պլանի և ընթացակարգերի առկայություն	Իրավախորհրդատու, Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	05-10.2017	Հաստատված գործունեության կարգի և ընթացակարգերի առկայությունը կայքում

	3. Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի գործունեության հաշվետվողականության մեխանիզմների մշակում	Պլանավորման փուլում է	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի Ուսանողական խորհուրդ  ՈԱ բաժին	Հաշվետվողականության մեխանիզմների, ձևաչափերի և ընթացակարգերի առկայություն	Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժնի պետ	11.2017-02.2018	Քննարկումների արձանագրություններ  Կարիերային կենտրոնի հաշվետվողականության հաստատված ընթացակարգեր՝ հստակեցված մեխանիզմներով և ձևաչափերով
<b>16. Մշակել ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմներ և ընթացակարգեր</b>	1. Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմների և ընթացակարգերի մշակում	Մշակման փուլում է	Իրավագիտության ամբիոն ԳԿՄԿ ուսանողական խորհուրդ	Ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու մշակված մեխանիզմներ և ընթացակարգեր	Իրավախորհրդատու	09.2017-03.2018	Հաստատված ընթացակարգեր և մեխանիզմներ
	2. Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմների և ընթացակարգերի ներդրում	Մշակման փուլում է	Տնօրինություն Դեկանատ	Ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու գործող ընթացակարգեր և ժամանակացույցեր	Տնօրեն	04.2018	Տնօրենի հրաման ընթացակարգերի ներդրման վերաբերյալ  Ուսանողների բավարարվածությունը վարչական անձնակազմի հասանելիությունից



	3. Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմներում և ընթացակարգերում առկա խնդիրների վերհանում	Մշակման փուլում է	ՈԱ բաժին Ուսանողական խորհուրդ	Ուսանողների արձագանքների հիման վրա վերանայված ընթացակարգեր	ՈԱ բաժնի պետ Ուսանողական խորհրդի նախագահ	05-12.2018	Վերլուծությունների հաշվետվություններ  Վերանայված ընթացակարգեր և մեխանիզմներ
<b>17. Կիրարկել ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգը</b>	1. Ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգի ուսումնասիրում և տեղայնացում	Մշակված է	Տնօրինություն Ուսումնական մաս Դեկանատ	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ռոտացիայի կարգի առկայություն	Իրավախորհրդատու	07-09.2017	ԳԽ-ում քննարկումների արձանագրություններ Ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիոն կարգի առկայություն կայքում
	2. Ուսանողների վճարովի հիմունքներից անվճարի տեղափոխման ռոտացիայի ընթացակարգի ներդրում	Պլանավորման փուլում է	Տնօրինություն Ուսումնական մաս Դեկանատ	Ռոտացիայի գործող կարգ Կենտրոնում	Տնօրեն	10.2017-01.2018	Ուսումնական մասի հաշվետվություն ռոտացիաների մասին Ռոտացիայի կիրարկման վերաբերյալ հրամաններ

<b>18. Մշակել ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ</b>	1. Աշխատանքային խմբի ձևավորում	Պլանավորման փուլում է	Դեկանատ, Ուսումնական մաս, Շրջանավարտների հետ կապերի և կարիերայի բաժին, ՈԱ բաժին, ԳԿՄԿ ուսանողական խորհուրդ	Գործող աշխատանքային խումբ	ՈԱ բաժնի պետ	09.2017	Աշխատանքային խմբի ձևավորման հրաման  Խմբի աշխատանքային պլան
	2. Ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմների և ընթացակարգերի մշակում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն	Դեկան, Որակի ապահովման բաժնի պետ	09.2017-12.2017	Քննարկումների արձանագրություններ  Ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման հաստատված մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն կայքում
	3. Ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների ներդրում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների ներդրման արդյունքներ,	ՈԱ բաժնի պետ	ՈԱ բաժնի պետ	09.2018-06.2019

							վերլուծություններ Ֆոկուս խմբային քննարկումների տվյալներ
	4.Ուսանողների խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների բարելավում	Պլանավորման փուլում է	Աշխատանքային խումբ	Ուսանողների կարծիքների հիման վրա վերանայված խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման բարելավված մեխանիզմներ	ՈԱ բաժնի պետ, Դեկան	06-09.2019	Քննարկումների արձանագրություններ  Խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման բարելավված մեխանիզմների առկայություն կայքում

**V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ**

<p><b>ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ</b></p> <p>ԳԿՄԿ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի հետ կապված խնդիրները հիմնականում առնչվում էին Կենտրոնի ՊԴ կազմի մրցույթային հիմունքներով համալրման, ՊԴ կազմի խրախուսման, տույժի ենթարկման քաղաքականության և ընթացակարգերի ոչ լիարժեք կիրառման, ՊԴ կազմի գնահատման մեխանիզմների լրամշակման անհրաժեշտության, ՊԴ կազմի որակավորման բարձրացման համակարգի և վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառության, ինչպես նաև վարչական</p>	<p><b>ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ</b></p> <p>Փորձագիտական այցից հետո բացահայտվել է, որ «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը» բաժնում առկա էին մի շարք բացթողումներ: Բացահայտվել է, որ անհրաժեշտ է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Գործարկել «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» կարգը և իրականացնել Կենտրոնի ՊԴ կազմի համալրումը մրցույթային հիմունքներով,</li> <li>2) Մշակել ՊԴ կազմի խրախուսման տույժի ենթարկման քաղաքականությունը և ընթացակարգերը, ներառելով հեռացումը աշխատանքից,</li> <li>3) Բոլոր մասնագիտության կրթական ծրագրերի համար սահմանել դասախոսական կազմի կոմպետենցիաներին ներկայացվող պահանջները</li> </ol>
--	--

